ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 7 *Общественные науки*

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ՉԵՐՆԻՇԵՎՍԿՈՒ «ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ»-Ը

Չկալովի մայրդային արխիվում պահվող ուրիշ շատ հետաքրքրական նյութերի մեջ հատուկ արժեք են ներկայացնում Չերնիշևսկու վերաբերյալ ութ փաստաթղթերը։ Այս ութ փաստաթղթերը, որոնց լրիվ թարգմանությունը տալիս ենք ստորև, կազմվել են 1883 թվականի օգոստոսի 22-ից (հ. տ.) մինչև նույն տարվա նոյեմբերի 10-ը։

Հայտնի է, որ ոուս միապետությունը երեք տասնյակ տարիներ անողոքաբար հետապնդել է Չերնիշևսկուն, պահելով նրան բանտերում, էտապային կայաններում և սիբիրյան ժանտ տաժանակրության ու աքսորի մեջ։ Ահավասիկ հիշյալ փաստաթղթերը սպանիչ կերպով պարզում են մի մասը այն եղանակների, որոնց դիմել է ցարական ինքնակալությունը Չերնիշևսկուն 1883 թվականի աշնանը Սիբիրի Վիլյույսկ կոչված բանտից Հաշտարխան տեղափոխելիս։

№ 1 փաստաթղթում ընթերցողը կնկատի կարևոր մի հանգամանք— Չերնիշևսկու բացառիկ ժողովրդականությունն ու այստեղից բխող՝ միապետականների երկյուղը։ Ոստիկանության դեպարտամենտի դիրեկտոր Վ. Գլեն Օրենբուրգի նահանգապետի ուշադրությունն է հրավիրում այն դանդամանքի վրա, որ չլինի թե Չերնիշևսկու ճանապարհորդությունը հայանի դառնա ժողովրդին—դա պետք է մնա որպես ամենախիստ գաղտնիք։ Երկրորդ՝ Գլեեի ասելով՝ ցարը հատուկ կարգադրություն է արել, որ «Ներ [Չերնիշևսկու։ Ս. Ս.] ուղևորության ընթացքում որևէ օվացիա չարվի նրան։

Այս երկու հիմնական նպատակներին հասնելու համար Գլեեն հրամայում է Օրենբուրգի նահանգապետին՝ Չերնիշևսկուն ուղարկել, „минуя водные пути" («մի կողմ թողնելով ջրային ճանապարհները») և ձեռք առնել բոլոր միջոցները՝ ի կատար ածելու «արարքագույն կամքը», որպեսզի նրա անցման մասին լուրեր չտարածվեն և ճանապարհորդության ժամանակ որևէ անկարգություն չլինի։

Ինքնին հասկանալի է „минуя водные пути" դարձվածքի իմաստը։ Վի վրա շատ ավելի հեշտ կիմացվեր «պետական հանցավոր Չերնիշևսկու» մասին, քան թե ցամաքային ճանապարհներին—երկաթուղային գնացքում, ուր հատուկ մեկուսի-վագոններ կամ կուպեներ կային, ինչպես և շոգեով մենակ ընթացող կառքում և այլն։

Ե՛նք գիտենք, որ 1883 թվականի օգոստոսի 22-ին (սեպտ. 4) Չերնիշևսկին աղատվում է Վիլյույսկի բանտից և ժանդարմների հսկողությամբ ուղարկվում Իրկուտսկ։ Այստեղից դեպի Եվրոպական Ռուսաստան նրան տանում են ոստիկանական ձիաքարշ սայլակով։ Մոտ երկու ամսվա ընթացքում Չերնիշևսկին կտրում է ավելի քան 4.000 վերստ տարածություն, այն ևս՝ աշնանային դժվարին ճանապարհներով։

Գլեվեի գրությունն ստանալուն պես նահանգապետ Աստաֆյեվը 1883 թվի սեպտեմբերի 8 (20)-ին նամակով դիմում է Օրենբուրգի նահանգական ժանդարմական վարչության պետին, առաջարկելով նրան անձամբ ներկայանալ իրեն (փաստաթուղթ № 2)։ Թե ինչ են խոսել նրանք, որ առաջ ինչ միջոցներ նախապատրաստել Չերնիշևսկուն ընդունելու և Հաշտարխան ուղարկելու վերաբերյալ,— դա մասամբ պարզվում է հետագա փաստաթղթերից։

Անցնում է ավելի քան մի ամիս։ Այս ժամանակամիջոցում Չերնիշևսկին կտրել էր իր ճանապարհի կեսը և մոտենում էր Օրենբուրգին։ Նահանգապետ Աստաֆյեվը, ստանալով լրացուցիչ ցուցումներ այն մարշրուտի մասին, որով Չերնիշևսկին պիտի ընթանար Օրենբուրգ հասնելուց հետո, 1883 թ. հոկտ. 8 (20)-ին ժանդարմական վարչությանն է ուղարկում այդ մարշրուտը և մի կարգադրություն։ Նահանգապետը հրամայում է. «Սույն գրությունն ստանալուն պես... ժանդարմական երկու ունտեր-օֆիցեր նշանակել, որպեսզի նրանք Չերնիշևսկու տեղ հասնելուց հետո նրան ընդունեն այն պահակներից, որոնք ուղեկցում են Իրկուտսկ քաղաքից...որպեսզի նրանք, ի կատարումն բարձրագույն կամքի, ձեռք առնեն բոլոր միջոցները՝ Չերնիշևսկու անցման լուրը չտարածելու և, ընդ նմին, որևէ անկարգություն թույլ չտալու համար» (փաստաթուղթ № 3)։

Արխիվում հայտարերված «հաշվետվությունից» երևում է, որ «կգրում որոշված է եղել Չերնիշևսկուն Օրենբուրգից մինչև Սիզրան տանել երկաթուղով (3-րդ կարգի վագոնով), իսկ Սիզրանից Հաշտարխան՝ ձիերով, փոստային ճանապարհներով — 1058 վերստ։[1]

1883 թ. հոկտեմբերի 13 (25)-ին, այսինքն՝ Չերնիշևսկու Օրենբուրգ հասնելուց մի քանի օր առաջ. ոստիկանության դեպարտամենտի դիրեկտոր Գլեհեն մի նոր ծածկագիր հեռագրով Պետերբուրգից հրամայում է Օրենբուրգի նահանգապետին.... «պետական հանցավոր Չերնիշևսկուն Օրենբուրգից Սիզրան ուղարկել երկրորդ կարգի վագոնի հատուկ կուպեով և, բացի դրանից՝ ի կանխումն որևէ պատահականության և կողմնակի անձանց հետ շփվելու հնարավորության, գործուղել ժանդարմական մի ունտեր-օֆիցեր՝ Օրենբուրգի կայարանից մինչև Սիզրան [Չերնիշևսկուն։ Ս. Ս.] ուղեկցելու համար» (փաստաթուղթ № 5)։ Իսկ քանի որ Պետերբուրգում ինչ-ինչ

[1] Եթե մենք փոքր ինչ ուշադիր քննության առնենք այդ հաշվեթուղթը (փաստաթուղթ № 4), ապա կտեսնենք, որ ցարական կառավարությունը Չերնիշևսկուն հատկացրած է եղել օրական 15 կոպեկ ճանապարհածախս։ Իսկ թե ինչ ռեալ արժեք է ունեցել այդ 15 կոպեկը, դա որոշ երևում է Զկալովի մարգային արխիվի մի այլ «Գործից», ուր հիշատակություն կա այն մասին. թե ինչ գնով պետք է Օրենբուրգ քաղաքում ձախվի հացը, միսը և այլ մթերքներ 1883 թ. սեպտեմբեր ամսին։ Պարզվում է, որ խոզի միսը ձախելիս են եղել ֆունտը 20 կ., հորթինը՝ 13—15 կ., իսկ սպիտակ հացի ֆունտը՝ $7^1/_2$—8 կոպ.։ Ուրեմն, ամբողջ օրվա համար հատկացված 15 կոպեկը կարող էր բավականացնել սոսկ այնքան, որ կալանավորը չմեռնի սովից...

Օրապահիկի համար հատկացված այդ նույն ողորմելի 15 կոպեկը մենք տեսնում ենք նաև Չերնիշևսկու մի այլ ճանապարհորդության ժամանակ—1864 թվականի ամռանը սկզբին Սիբիր ուղարկվելիս։ Տոբոլսկից մինչև Իրկուտսկ $60^1/_2$ օրվա համար որպես ճանապարհածախս պետական գանձանից նրան հատկացվում է 9 ռուբլի $7^1/_2$ կոպեկ=15 կոպ. օրական, մինչդեռ նրան ուղեկցող ժանդարմները նույն ժամանակամիջոցում ստացել են 120 ռուբլի 47 կոպեկ օրապահիկ։

նկատառումներով որոշած են եղել Չերնիշևսկուն ուղարկել երկրորդ կարգի վագոնով, ուստի նահանգապետ Աստաֆյեվը հատկացնում է լրացուցիչ 45 ռուբլի՝ այդ ծախսերի համար։

Վերջապես, 1883 թ. հոկտեմբերի 19 (31)-ին, այսինքն՝ Վիլյույսկից մեկնելուց 56 օր հետո, Չերնիշևսկին հասնում է Օրենբուրգ—կալանավորի շորերով, պահակցող երկու ժանդարմների մշտական ու ակնդետ հսկողության տակ, որոնք, նրանից անրաժան, հսկելիս են եղել նրա ամեն մի քայլին։ Կասկած չկա, որ նահանգապետ Աստաֆյեվը հենց նրան՝ Չերնիշևսկուն նկատի ունի իր կարգադրությունների մեջ և նրա մասին է խոսում, չհիշելով անունն անդամ, երբ գրում է՝ «հայտնի անձնավորությունը»։

Ինքը՝ Չերնիշևսկին շատ թեթևակի է հիշում Օրենբուրգ հասնելու մասին։ Նրա ձեռքով կազմված է մի գրություն—„Записки по поводу путевых издержек" վերնագրով։ Այս փաստաթղթից մենք տեղեկանում ենք, որ Չերնիշևսկին Օրենբուրգ է հասնում այն միակ տարանտասով, որով նա դուրս էր եկել Իրկուտսկից։

Օրենբուրգից նրան տանում են երկաթուղով և հոկտեմբերի 23-ին (նոյեմբերի 4) նա հասնում է Սարատով (փաստաթուղթ № 7)։ Ո՞վ գիտե, թե ի՞նչ հույզերով է նա մոտենում իր հայրենի քաղաքի սահմաններին, կարոտի ի՞նչ ալիքներ են բախում նրա մեծ սիրտը։ Սակայն այստեղի դաղարն այնքան կարճատև է լինում, որ Չերնիշևսկին հազիվ կարողանում է թեթևակիորեն տեսնվել իր կնոջ՝ Օլգա Սոկրատովնայի և մոտ բարեկամուհու՝ Վ. Ն. Պիպինայի հետ։ Անկատար է մնում նրա բուռն իղձը՝ իր երախտագիտությունը հայտնել բարի Պիպին ծերունիներին, որոնք այնպես հոգատար են եղել իր ընտանիքի նկատմամբ։ Պիպինները նույնպես ապրում էին Սարատովում։

Անհավանական չէ, որ մասնավորապես Սարատով քաղաքում դիտմամբ կարճատև լիներ տարագիր աքսորականի դադարը—Չերնիշևսկուն զրկելու իր հարազատների հետ տեսնվելու հնարավորությունից։ Ցարի երկյուղը՝ թե ժողովուրդը ճամբին օվացիաներ կսարքի նրա մեծ ու բացառիկ հեղինակությանը՝ ամենից ավելի հնարավոր էր Չերնիշևսկու հայրենի քաղաքում... Անկախ դրանից, չպետք է մոռանալ և այն, որ հաստարյա ամբողջ ճանապարհին արտակարգ արագությամբ է սլացել Չերնիշևսկու տարանտասը։ Որոշ ուղեմասերում նրանք ընթացել են առանց որևէ դադարի և կամ գիշերելու, եթե չհաշվենք այն կարճատև հատումները, երբ անհրաժեշտություն է եղել ձիերը փոխել—ոչ ավելին։

Վերջապես 1883 թ. հոկտեմբերի 28-ին (նոյեմբերի 9) Չերնիշևսկին հասնում է Հաշտարխան։ Այստեղից իր բարեկամ Ալ. Նիկ. Պիպինին[1] դրած առաջին նամակում՝ հազիվ երկու տող կա այդ մասին.

«Սիրելի եղբայր։ երեկ առավոտ տեղս հասա փոստային սայլակով»։

Մենք կազմեցինք Չերնիշևսկու «ճանապարհորդության» սխեմատիկ

---

1 Н. Г. Литературное наследие, т. III. Письма. стр. 5 (Москва, 1930 г.).

2 Պիպին, Ալ. Նիկ. (1833—1904), գիտնական, հրապարակախոս, պրոֆեսոր, ապա և ակադեմիկոս ռուսաց պատմության և սլավոնական գրականությունների։ „Современник"-ի աշխատակից, երկար տարիներ մասնակցել է „Вестник Европы" պարբերականին։ Այս անշահախնդիր մարդ- [illegible], աքսորական Չերնիշևսկու ընտանիքը, կրթություն ավել նրա որդիներին, հրատարակել նրա մի շարք գրական գործերը։

նկարագիրը։ Կարծում ենք, որ հայ ընթերցողի համար հետաքրքրություն կներկայացնի հիշված ութ փաստաթղթերի թարգմանությունը։

ՍԱՌՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Միանգամայն դայտնի

Ոստիկանական Դեպարտամենտի
Դիրեկտոր
№ 3412

1883 թ. օգոստոսի 29

Նորին Գերազանցություն
Մ. Ա. Աստաֆյեվին[3]

Ողորմած Տեր Միխայիլ Իվանովիչ.

Գետական հանցավոր Նիկոլայ Չերնիշևսկու որդիների միջնորդությունը՝ նրանց հորը հայրենիք վերադարձնելու մասին՝ Ներքին Գործերի Մինիստրի ղեկուցումին-այդ առթիվ, Թագավոր Կայսրը բարեհաճեց նախնական թույլտվություն՝ Չերնիշևսկուն Աստրախան տեղափոխելու մասին, պայմանով, որ նրա ուղևորության ընթացքում որևէ օվացիա չարվի նրան,— Բարձրագույնս հրամայել բարեհաճեց Արդարադատության պ. Մինիստրին, այս հարցի վերաբերյալ վերջնական զեկուցում անելու համար։ Դրանից հետո նույն այդ միջնորդության առթիվ Արդարադատության պ. Մինիստրի ամենահպատակորեն ներկայացրած զեկուցման հետևանքով Թագավոր Կայսրը հուլիսի 6-ի օրը Բարձրագույնս հրամայել բարեհաճեց. թույլատրելով Նիկոլայ Չերնիշևսկուն փոխել իր բնակավայրը Աստրախան՝ ոստիկանության հսկողության տակ, նրան ճանաչել—կայքի բոլոր իրավունքներից զրկելու փոխարեն—պատժական Օրինագրքի 43 հոդվածով զրկված՝ բոլոր, մանավանդ անձնական և ըստ կայքի ստացած իրավունքներից և արտոնություններից։ սակայն առանց կայքի իրավունքները վերականգնելու։

Այսպիսի Բարձրագույն կամքի մասին հայտնված էր՝ պետք եղած կարգադրությունների համար՝ Չերնիշևսկուն ըստ նշանակման ուղարկելու վերաբերյալ—Արևելյան Սիբիրի գեներալ նահանգապետին։

Այժմ գեներալ-ադյուտանտ... հայտնում է, որ ինքը կարգադրություն է արել անհապաղ Չերնիշևսկուն Իրկուտսկի նահանգի Վիլյույսկ քաղաքից Իրկուտսկ բերելու մասին, ըստ որում հետո ենթադրվում է նրան ուղարկել երկու ժանդարմների հսկողությամբ բաց թերթով („открытым листом") մինչև Օրենբուրգ, առանց պատշաճ իշխանություններին զգուշացնելու՝ ի խուսափումն լուրը տարածվելուց։

Նկատի ունենալով վիրոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ պահակային ժանդարմները գործուղված են եղել Իրկուտսկից մինչև Օրենբուրգ, պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու Ձերդ Գերազանցությանը,—

[3] Օրենբուրգի նահանգապետ և կազակական զորքի ատաման 1878—1884 թ.թ.

Չերնիշևսկու Օրենբուրգ հասնելուն պես Նահանգական ժանդարմական վարչության համաձայնությամբ տեղական երկու ժանդարմներ գործուղել, փոխարինելու Իրկուտսկից Չերնիշևսկուն ուղեկցողներին և նոր նշանակվածների հսկողությամբ Չերնիշևսկուն տանել նշված վայրը, մի կողմ թողնելով ջրային ճանապարհները և ի կատարումն Բարձրագույն կամքի, ձեռք առնել բոլոր միջոցները՝ թույլ չտալու, որ Չերնիշևսկու անցումը իմացվի և ընդ այդմ ուղևորության որևէ անկարգություն լինի։

Ընդունեցեք, Ողորմած Տեր, իմ կատարյալ հարգանքի և նվիրվածության հավաստիքը։

Վ. Պլեվե

Իսկականի հետ ճիշտ է. Օրենբուրգի Նահանգ. ժանդարմ. վարչության ադյուտանտ պորուչիկ

(ստորագր.)

№ 2

№ 365

3412 նամակը անձամբ հանձնված է
պ. Նահանգապետին
պորուչիկ՝ 8 սեպտեմբերի
(ստորագր.)

Օրենբուրգի նահանգապետ գեներալ-լեյտենանտ Աստաֆյեվը վկայելով իր կատարյալ հարգանքը Նորին Բարձր-բարեծննդությանը՝ Օրենբուրգի Նահանգական ժանդարմական վարչության պետի պաշտոնակատար պ.-ին և ընդ սմին ուղարկելով Ոստիկանության Դեպարտամենտի Դիրեկտորի նամակը՝ կարդալու համար,—խոնարհաբար խնդրում է շնորհ բերել վաղը սեպտեմբերի 9-ին առավոտյան 9½ ժամին։

№ 17

8 սեպտեմբերի 1883 թ.

№ 3

№ 399

Ներքին գործերի Մինիստրություն
Օրենբուրգի Նահանգապետի Դրասենյակի
Պ ե տ

Օրենբուրգի Նահանգական
Ժանդարմական Վարչության
պարոն պետին

8 հոկտեմբերի 1883 թ.

№ 377

Օրենբուրգ ք.

Ձերդ Բարեծննդության արված անձնական բացատրություններից հայտնի է, որ պետական հանցավոր Նիկոլայ Չերնիշևսկին, համաձայն Բարձրագույնս Հրամանի, ուղիղ պետք է ուղարկվի իրեն նշված վայրը՝ Աստրախան ք., ոստիկանության հսկողության տակ՝ տեղական երկու ժանդարմների պահակությամբ։

Սրա հետևանքով ես կարևոր եմ համարում այժմ ևեթ ուղարկել Ձերդ Բարեծննդությանը. ա) այն մարշրուտը, որով պետք է ընթանա Չերնիշևսկին մինչև Աստրախան ք., համաձայն Ոստիկանության Դեպարտամենտի Դիրեկտորի այս առթիվ արված հատուկ ցուցումների. բ) դրամը քառա-

սուն և վեց ռուբլի, որ հասնում է իրրև ճամբի ծախս, և գ) մի գրքույկ՝ այս դրամից արվելիք ծախսերը գրանցելու։

Խոնարհարար խնդրում եմ Ձերդ Բարեծննդությանը սույն գրությունն ստանալուն պես ժանդարմական երկու ունտեր-օֆիցեր նշանակելու մասին, որպեսզի նրանք՝ 1-ին, Չերնիշևսկու տեղ հասնելուց հետո նրան ընդունեն այն պահակներից, որոնք կուղեկցեն Իրկուտսկ քաղաքից. 2-րդ, որպեսզի ճանապարհին՝ ի կատարումն Բարձրագույն Կամքի՝ ձեռք առնեն բոլոր միջոցները՝ Չերնիշևսկու անցման լուրը չտարածելու և դրա հետ մեկտեղ որևէ անկարգություն թույլ չտալու համար. 3-րդ, որպեսզի Աստրախան հասնելուց հետո նրան հանձնեն Աստրախանի Նահանգապետի Գրասենյակը այն ծրարի հետ միասին, որ Ձեզ կուղարկվի առանձին, և 4-րդ, որպեսզի Օրենբուրգ վերադառնալուց հետո դրամական ծախսերի գրքույկը ներկայացվի իմ գրասենյակին, ծախսերի հանդերձ, եթե այդպիսին լինի։

Անկախ սրանից՝ ես իմ պարտքն եմ համարում ավելացնել, որ բացի ներկայացվող դրամից՝ քառասուն վեց ռուբլի—Չերնիշևսկուն տեղափոխելիս ճամբու ծախս, ես առաջարկել եմ նահանգական գանձատնից բաց թողնել նորից յոթ ռուբլի՝ ճանապարհին չնախատեսված պետքերի համար և որ այդ դրամը գանձատնից ստացվելուն պես կհանձնվի Ձերդ Բարեծննդությանը։ Քառասուն վեց ռուբլի դրամն ստանալու մասին չզլանաք տեղյակ պահել։

Նահանգապետ՝ Մ. Աստաֆյեվ
Գրասենյակի կառավարիչ՝
(ստորագր.)

№ 4

ՀԱՇԻՎ

Դրամի, որ բաց էր թողնված Օրենբուրգ քաղաքից մինչ Աստրախան քաղաք ուղարկելու համար

ա) Օրենբուրգ քաղաքից մինչև Սիզրան մի տոմսի վճար երկաթուղու երրորդ կարգով—7 ռ. 30 կ.։

բ) Սիզրան քաղաքից մինչև Աստրախան փոստային ճամբով 1058 վերստի համար ուղեդրամ —32 ռ. $17^1/_2$ կ.։

գ) Սննդի ծախս Օրենբուրգ քաղաքից մինչև Սիզրան երկու օրվա համար, օրական հաշված 300 վերստ—30 կ. և

դ) Սննդի ծախս Սիզրան քաղաքից մինչև Աստրախան 1072 վերստի համար, հաշվելով 50-ական վերստ՝ օր ու գիշերվա ընթացքում—3 ռ. 30 կ.

43 ռ. $7^1/_2$ կ.

Բացի քառասուներեք ռ. $7^1/_2$ կ., որ բաշխված է այս հաշվարկով, սրա հետ առանձին ուղարկվում է 2 ռ. $92^1/_2$ կ. արտակարգ ծախսերի համար, իսկ ընդամենը քառասունվեց ռուբլի։

Օրենբուրգի նահանգապետի
գրասենյակի վարիչ՝
(ստորագր.)

№ 5

№ 412
Ներքին Գործերի Մինիստրություն.
Օրենբուրգի Նահանգի
Գրասենյակի Պետ
13 հոկտեմբերի 1883 թ.
№ 389
Օրենբուրգ ք.

Միանգամայն գաղտնի

Օրենբուրգի Ժանդարմական Վարչության պարոն Պետին

Ոստիկանության Դեպարտամենտի Դիրեկտորը ծածկագիր հեռագրով խնդրում է Օրենբուրգից Սիզրան քաղաք ուղարկել պետական հանցավոր Զերնիշևսկուն երկրորդ կարգի վագոնի հատուկ կուպեով և, բացի դրանից, ի կանխումն որևէ պատահականության և կողմնակի անձանց հետ չփվելու հնարավորության, գործուղել ժանդարմական մի ուն տեր-օֆիցեր՝ Օրենբուրգի կայարանից մինչև Սիզրան ուղեկցելու համար։ Սիզրան հասնելուն պես ժանդարմները՝ հրամաններ ստանալու համար պետք է ներկայանան կապիտան ...-ին, որը նախազգուշացված է հեռագրով։

Սրա հիման վրա ես առաջարկել եմ անձամբ կապիտան ...-ին կարգադրելու, որ նախօրոք մի ժանդարմ նշանակի՝ Զերնիշևսկուն մինչև Սիզրան ք. ուղեկցելու համար, սակայն, անկախ սրանից, պարտք եմ համարում վերոգրյալի մասին հայտնել Ձերդ Բարեձննդությանը ի լրացումն հոկտեմբերին ... գրության և նկատի ունենալով ճանապարհածախսի հավելումը— Զերնիշևսկուն մինչև Սիզրան ք. երկրորդ կարգի վագոնի հատուկ կուպեով տեղափոխելու—պատիվ ունեմ Ձեզ հաղորդել Օրենբուրգի նահանգական գանձատնից ավանսով պահանջված քառասունհինգ ռուբլին, խոնարհաբար խնդրելով սույն դրամն ստանալու մասին ինձ տեղեկացնել։

Նահանգապետ՝ Մ. Աստաֆյեվ
Գրասենյակի կառավարիչ՝
(ստորագր.)

№ 6

Միանգամայն գաղտնի

Օրենբուրգի Նահանգական Ժանդարմական Վարչության պետին

Ողորմած Տեր
Վլադիմիր Ալեքսանդրովիչ

Համաձայն [մեր, Ս. Ս.] անձնական բացատրությունների, խոնարհաբար խնդրում եմ կարդադրեք, որ անհապաղ ինձ մոտ ուղարկեն երկու ժանդարմական ուն տեր-օֆիցերներ, որոնց Դուք նախանշանակել եք հայտնի անձնավորությանը մինչև Աստրախան ք. ուղեկցելու, ըստ որում չմոռանաք հրամայել ժանդարմներին—հիշյալ անձնավորությունն ընդունել այն պահակցողներից, որոնք նրան ուղեկցում են Իրկուտսկ քաղաքից։

Անկախ սրանից՝ չմերժեք այսօր ժամի 12-ին բարեհաճել ինձ մոտ՝ վերջնական բացատրությունների համար՝ այդ անձնավորությանը նախազգուշական բոլոր միջոցներով ուղարկելու վերաբերյալ։

Խոնարհաբար խնդրում եմ ընդունել իմ՝ առ Ձեզ տածած կատարյալ հարգանաց և նվիրվածության հավաստիքը։

Մ. Աստաֆյեվ

19 հոկտեմբերի 1883 թ.

№ 7

ԳԱՂՏՆԻ

Սարատովի
Ժանդարմական Նահանգական
Վարչության պետ
24 հոկտեմբերի 1883 թ.
№ 1240
Սարատով ք.

29 հոկտ.

Ձեզ վստահված Վարչության երկու ունտեր-օֆիցերները, որոնք ուղեկցում էին Ձեզ հայտնի անձնավորությանը, բարեհաջող անցան Սարատովից դեպի Աստրախան։

Գնդապետ
(ստորագր.)

Օրենբուրգի Նահանգական Ժանդարմական Վարչության պարոն պետին

№ 8

ԳԱՂՏՆԻ

№ 293
10 նոյեմբերի 1883 թ.
Օրենբուրգ ք.

Օրենբուրգի Նահանգապետին

Ընդ սմին Ձերդ Գերազանցությանն ուղարկելով Աստրախանի ոստիկանապետի հոկտեմբերի 27-ի № 3917 անդորրագիրը առ այն, որ ինձ վստահված վարչության ժանդարմական երկու ունտեր-օֆիցերները Օրենբուրգից Աստրախան են ուղեկցել պետական հանցավոր Ձերնիշևսկուն, № 1883 վկայականը, տրված Ձեր Գերազանցության կողմից ժանդարմական ունտեր-օֆիցերներին... դեպի Աստրախան նրանց անարգել անցման համար, ելից-մտից տետրը այն դրամի, որ բաց էր թողնված կալանավորի ուղեծախսի և սննդի համար և ծախսից մնացած դրամը քսանհինգ ռուբլի իննսունյոթ ու երեք քառորդ կոպեկ (25 ռ. 97¾ կոպ.), — պատիվ ունեմ խոնարհաբար խնդրել դրամը ե հավելվածներն[1] ստանալու մասին ինձ չթողնել առանց տեղեկության։

Ստորագրեց՝ Վարչության պետ
գնդապետ (ստորագր.)
Ճիշտ է՝ Վարչության ադյուտանտ պորուչիկ (ստորագր.)

[1] Դոքի մեջ այս հավելվածները չկան։